

ՏԱՐԾԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

— — — — —

Ծխական անդամական ընդհանուր ժամանակակիցն է առաջին Ծխական Խորհրդի նիստը տեղի ունեցաւ Փետր. 24, 1965-ին եւ Հետեւեալ զիւանը ընտրեց Ատենապետ՝ Հայկ Պաստիկեան, Փոխ-Ատենապետ Գնդ-Ճ-Ճըսքալեան, Ատենապիր Գասպար Գասպարեան, փոխ-Ատենապիր Վարդգէս Պուրսալեան, Գանձապահ Ճ-Ճ Անտոնեան, փոխ-Գանձապահ Ֆիլիփ Օկուլեան, Խորհրդականներ Ռէյ Պապիկեան, Հայկ Գավաթեան եւ իտ Օնանեան:

Հայր Սուլըբը Խորը նորը նորի Ծխական Խորհրդը եւ Եկեղեցւոյս յարակից Մարմիններու Վարչական Խորհրդու իրենց տեղեկագիրներով յղեց Առաջ-նորդարան ու ստացաւ անոնց վաւերացումը:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒԹԻՒՆ. — Ծխական Խորհրդիս առաջին գործնէութիւնը եղաւ Մայիսին Յարգանքի ձարկերոյթով մը նուիրուած Տիար Միհրան Մեսրոպեանի: Իրապէս ակնյայտ էր ծխականներու եւ բարեկամներու Ներկայութիւնը, որոնք եկած էին գնահատելու Եկեղեցւոյս անձնուէր ձարտարապետին աշխատանքը: Օրուան ձաշկերոյթի ատենապետն էր Տօքթ-Վարդգէս Պուրսալեան:

Յունիսին տեղի ունեցաւ Եկեղեցւոյս տարեկան միջնիքը Ճ-Ճ Գալայ-ճեանի անտառակին մէջ Գեղեցիկ Պուրութունը բազմութիւն մը, որոնք ճաշակեցին Համեղ խորովածը: Օրուան կազմակերպիչ-պատասխանատուն էր Ֆիլիփ Օկուլեան:

Հոկտեմբերին, Տիկնանց Միութեան ժամանակութեամբ տուինք Մշակոյթի Օրուան յայտագիր մը ճաշկերոյթով: Ներկայ եղան մեծ թիւով ունկնդիրներ: Օրուան յայտագիրը վարեց Հայկ Գավաթեան:

Նոյեմբերին տեղի ունեցաւ Եկեղեցւոյս տարեկան Պազարը: Տիկնանց Միութիւնը ստանձնեց Խոհանոցի եւ պութերու բաժինը: Պազարը աննախընթաց յաջողութիւն մըն էր մեր նախատեսումէն: Ճ-Ճ Գազանճեան Ատենապետեց Պազարին:

Կաղանդի հաւաքոյթը տեղի ունեցաւ Եկեղեցւոյս սրահը: Զուարթ երեկոյթ մըն էր ու ծխականները ուրախ հոգեկինակով նոր Տարին Ողջունեցին: Ես ստանձնած էի երեկոյթի ատենապետութիւնը:

ԻՐԱԿԱՆԱՑԱՇԱԾ ԳՈՐԾԵՐ. — Եկեղեցւոյս կեղրուական շերմութիւնը կանունաւորուեցաւ եւ զետեղուեցաւ ինքնագործ ջուրի զովացուցիչ մը սրահին մէջ: Այս երկութը կարեւորագոյնն էր, քանի որ այլեւս Եկեղեցին ունի լաւագոյն շերուցում եւ ծարաւ ծխականներ իրենց գոհացումը կրնան ստանալ զովացուցիչ ջուրի գործիքնչ Վերի երկու տըւեալներու ծախքը հոգացուեցաւ Եինութեան Յանձնախումբի կողմէ:

Սրահի բարեփոխութիւնները տեղի ունեցան, նախ պատերու շեղումը ճշդուեցաւ, մուտքի դրան պատը բարեփոխուեցաւ, եւ գործածական սենեակը շինուեցաւ: Սրահը Ներկուեցաւ, Տիկնանց լուացարանը շինուեցաւ, սանդուխտունները ներկուեցան, բեմի ճակատը շինուեցաւ, հագուստի կախելիքներ հաստատուեցան եւ խոհանոցի դրներ զետեղուեցաւ: Սեծագոյն մասը այս գործերուն ծխական խորհուրդի անդամներու եւ միքանի ծխականներու գոնութեամբ կատարուեցան:

Հոս կարեւորութեամբ կուզեմ շեշտել անունը Տիար Ազգանազ Խաչիկեանի: Բոլորդ լաւագոյնս գիտէք անձնուէր ծառայութիւնը իր Եկեղեցւոյս համարը Անցնող տարի եւս ինք դժուարին ժամեր տրամադրեց, ծեփելով, ներկելով եւ նորոգելով: Մեր շնորհակալիքը իրեն:

Տիկնանց Միութիւնը տրամադրեց ծախսը նոր խոհանոցի կազմուածքներու եւ պահարաններու: Ճ-Ճ Անտոնեան Հին գարակները վերցնելով նորերը զետեղեց, տալով խոհանոցին ներկայանալի տեսք մը: Մեր շնորհակալիքը Տիկնանց Միութեան եւ Ճ-Ճ Անտոնեանին:

Եկեղեցւոյս գաւիթը գտնուող երկու սենեակնեցու մէջ ռմին Ծխական Խորհուրդի եւ միւսը Կիրակօքնայ ղաւարանիւ զետեղուեցան մասնաւոր առաստաղներ :

Անդամարշաւի յանձնախումբ մը կազմուեցաւ ատենապետութեամբ Գնդ.ձ. Ճըսքալեանիւ Այս յանձնախումբի գործը եղաւ աւելցնել անդամներու թիւը եւ կապ պահել անոնց հետև :

Ծնորհիւ Հայր Սուրբի աշխատանքներուն Առաջնորդարանիս յետնեակ պարտքերը մասամբ վճարեցինք եւ մասամբ ալ զեղջուեցաւ Թեմական Խորհուրդի առած մէկ որոշումով։ Զեղջուած գումարը աւելի էր հազար տաւը-ը էն եւ իբր այդ գնահետելի կը գտնենք Հայր Սուրբին այս գետնի Վրայ տարած աշխատանքը որ կրցաւ նկատողութեան յանձնել եւ կարգադրել թեմական Խորհուրդի մէջ։

### ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ճիշտ է որ Վերեւ յիշուած տողերը մեծ մասամբ կը նդգրկեն շէնքի նորոգութիւններ եւ բարեփոխութիւններ, սակայն Ծխական Խորհուրդս մեծ մասամբ ժամանակ եւ մտածողութիւն տրամադրած է Եկեղեցւոյս Կեանքին։ Որքան ծուխս մեծնայ, կը շատնան նաեւ Եկեղեցին վարելու մտահոգութիւնները եւ պէտքը կունենայ աւելի ժամանակի եւ աշխատանքի։

Հոս կուզեմ շնորհակալութիւններս յայտնել Գերադարեգին Հայր Սուրբին, իր յարատեւ աշխատանքին իբր ծուխիս հովիւր եւ առաջնորդը անոր։ Նա- եւ շնորհակալութիւններ Եկեղեցւոյս յարակից եւ հովանիին ներքեւ գոր- ծող բոլոր մարմիններու վարչական եւ անդամական գանգուածին, իրենց ցոլց տուած գեղեցիկ գործակցական ոգիին համար։ Ծխական Խորհուրդս իբր կարե- լին ի գործ դրած է պահելու մօտ կապ բոլոր Եկեղեցւոյս կազմակերպութ- եանց հետև նաեւ շնորհակալութիւններ բոլոր ծխականներուն որոնք եղան օգտակար եւ ըրին անցնող տարին յաջող շիշան մը։

Իմ այս խօսքի Վերջաբանին կուզեմ յայտնել շնորհակալութիւններ ծխական Խորհուրդի բոլոր անդամներուն, իրենց պատասխանատու աշխատանքին համար։

Եւ ի Վերջոյ, յանուն Ծխական Խորհուրդի շնորհակալութիւններ բո- լոր ծխականներուն, իրենց օգնութեան եւ նուիրաբերումին, որուն շնորհիւ եղաւ կարելի մատակարարել մեր Ս.Եկեղեցին։

Մասմ Զերդ

Հայկ Պաստիկեան  
Ատենապետ Ծխական Խորհուրդոյ